616

1. Երանելի է Սուրբ Հոգով լցված մարդը,
Չի քայլում խորհրդով ամբարշտի,
Մեղավորների ճամփի մեջ նա չի մնում
Կամ ծաղր անողին տալիս որոշում:
Տե՛ր, սիրում եմ Քո Օրենքը,
Որ հոգիս է նորոգում,
Պատվիրանքդ սուրբ, ջինջ ու պայծառ է,
Աչքերս է լուսավորում (2):

2. Տե՛ր, Քո անուշիկ, կենարար Խոսքի ջուրը
Ոռոգեց կյանքիս չորացած ճյուղը,
Չթափվեց տերև մի, հաջող են միշտ գործերս,
Վայելում եմ, Տե՛ր, որթիդ պտուղը:
Հա՛յր, սուրբ սերդ մեզ հետ լինի,
Որդուդ շնորհքով տաս թողություն,
Հաղորդ լինենք Քո Սուրբ Հոգուն,
Որ վայելենք Քեզ երկնքում:

3. Հայր մեր երկնային, Քո սերը միշտ մեզ հետ է
Օրհնյալ Հիսուսի սուրբ շնորհքի հետ:
Սուրբ Հոգուդ բացածը մեր սրտերում սուրբ գետ է,
Թող հորդի մեր մեջ հար-հավիտյան:
Երգել 1-ին և 2-րդ կրկներգերը